

Արիւնը տեղը չի մնալ, միայն թէ համբերութեամբ:

Արջին կալումը լուծ անիլ տալը հետ է, բայց՝ աղբը վեր առնելը դժուար է:

Արջը մէշիցը (11) խոռովել է, մէշէն երբէք խաբար (12) չունի:

Արեւը չ'ծագած՝ ինչէ՞ր կ'ծաղին:

Արքայ մի՛ հպարտանար, քննից մեծ Աստուած կայ:

Ամեն մարդ՝ կրակը իւր բաղարջի տակն է քաշում: Ասացի չասացի:

Աւեր ջաղացի օլուղն (13) ի՞նչ է, առուն ի՞նչ, անօգուտ հարստի աղքատին օգուտն ի՞նչ:

Աւեր քաղքին չէն անուն:

Ամեն մարդոյ սրտումը մի առիւծ է պառկած:

Բայի (14) ծառին շան զլուխ:

Բախալ (15) արդար տո՛ւ՛, արդար ա՛ռ:

Բաղնիքում խաղ ասելը, օտար տեղում պարծենալը, դարիցը վեր ձի բռնելը:

Բաղնիք գնալիս՝ դուռնին (16) է զմայլում, հարսնիք գնալիս՝ դուռնին:

Բամբասանք չէ՛, բանն ասանկ է:

Բանը չախալ (17) է եղել, զբերել վար իջուցէք:

Բարեկամի հացը պատճառներով են ուտում:

Բարեկամը պիտի է նայում, թշնամին ոտքին:

Բարի զաւակը օրօրօցիցն է յայտնի լինում:

Բերին՝ բերեն՝ դանակը պոչին կտրում են:

Բոլորը մօրս խաթրըն (18) են հարցնում, հօրս հէջ (19) չ'կայ:

Բրդօղը գիտէ, ուտողն ի՞նչ գիտէ:

Փաթէն ծոցդ պա՛ս ես պահում:

Փայից վախեցողը ոչտար չի պահում:

Փայը սովածութիւնից դարիցը չի կարում՝ ելլել, ասում են անտէրը որբան կերել է:

Փայի ահիցը գեղ չ'չինե՛նք:

Փայի տարածը հօրը հոգուն հաց է սնպում:

Փարի հաց՝ թթու թան, պապս ուտէ երթայ գութան:

Գետը անցանք, առուն խեղդուինք:

Գժութիւնը խփելով, մարդկութիւնը տալով կը լինին:

Գիշերը չի ուզում՝ քնիլ, առաւօտը չի ուզում՝ վեր կենալ:

(Սեպտեմբերի 1-ին 1927-ին)

(11) Աւելի, և երբեմն կնշանակէ անասուն:

(12) Լաւ, խալ:

(13) Խոռովել, առնել, վեր առնել:

(14) Այնպէս, կնշանակէ:

(15) Ելալ, քալ:

(16) Աղբիւն:

(17) Երբեմն զ արքայի ողբ:

(18) Սեպտեմբեր, օգոստոս, օգոստոս-սեպտեմբեր, սեպտեմբեր:

(19) Աւելի, և քիչ:

Յանցելումն ի Բերա Ա. Պօլսոյ հրկեղութենէ վնասեալ Ազգայնոց համար վեհ. Աթոռիկոսի կողմանէ Ռուսաստանի մեր Ազգայիններէն նպաստ հաւաքելու արդէն ուղղուած յորդորական Առնդակները յայտնի են, որով բաց ի յայլոց՝ Պալար քաղաքի մէջ գտնուած բարենպաստակ երիտասարդաց խումբն ևս հետեւեալ գրութեամբ 370 բուբլի փութացած են յղել առ Նորին Վեհ. Օծութիւնն առ ի հասուցանել ի նպաստ վերոյիշեալ Բերարնակ Ազգայնոց: Արդովեմք նոյն երիտասարդաց ազգասիրական ծննդաբերտ զգացմունքները հանդերձ շնորհակալութեամբք:

ԱՍՏՈՒԱԾԱՐԵԱՆ ԱՆՅՐԱՊԵՏ

ԵՒ ՎԵՀԱՓԱՌ ՏԷՐ ՄԵՐ:

Ցաւ մեծ զգացեալ յանձինս մերում ի լսելն մեր զդառնաղէտ պատահար հրկիւման սիրելի համազգեսաց մերոց որ ի Բիրայ Առաստանդուաբօլսոյ, որոց եղկելի թշուառութիւնք՝ զորս համայն մի առ մի նկարագրեցին Ազգային Եւրոպական լրագիրք, արդարեւ ի սիրտս մեր անցան, և ետուն մեզ զառիթս անհնարին վշտակցութեան ընդ տարաբաղտութիւնս նոցին: Առ որ զայս բան ի սուրբ կամս նախախնամութեան թողեալ, որ գիտէ հարկանել և կեցուցանել, մէք տարարնակ եղբարքս ապաքաղտ վիճակի դիպեալ ազգակցացս՝ և հարազատ որդիքս 2 երոյն Անհատութեանն ոչ կարելով անզգայաբար տանել զնեղութիւնսն՝ յիշեալ եղբարակցացն մերոց՝ և անտարբեր մնալ ի նոյն, ուստի փոյթ յանձին կալաք շտապողակի կատարել զպարտիսն՝ առ ազգն մեր. որ և կամեցաք ըստ մերովսանն կարեաց ազգասիրաբար օգնել նոցա ի հեռուստ, Յորոյ սակս խումբ մեր՝ որ կազմի յամանց երիտասարդաց քաղաքիս՝ կամեցաւ առ ի կարեկցաբար նպաստաւորել տարաբաղդ հրկիւեալ ազգայնոցս տալ երկուս Բատկրական ներկայացմունս, որք եղեն ի 17ն և 130ն անցելոյ ամսնանն օգոստոսի, յորոց վաստակեցաք զերկուս հարիւր յիսուն բուբլիս արծաթոյ, Բայց զայս ոչ բաւական համարեալ՝ ժողովեցաք ի միմեանց զյիսուն բուբլի, և զիմեցաք նախ քան զսոյն ներկա-

